## ԳԼՈՒԽ ՃՂԵ.

Թուղթ պարտուց կնոջ ամուսնացելոյ եթէ գոցի առն կնոջ յանմիկ գործս վաճառականի 'ի տարը յաշխարհ արժան է մինչև 'ի միոյ տարոջ երկու հարիւր դահեկան երծաթի ոչ ևս աւելի քան զայս։

## ԳԼՈՒԽ ՃՂԶ.

Ամենայն աղաւաշ խաղացող թէ թղթաւ եթէ ջոնկով ճանաւ և այլն, ցերեկն գտեալ ըմբըռնեսցի և կողոպտեսցի զոր ինչ գոցի 'ի ձեռին և տացի տանն ողորմութեան հայոց, այլ 'ի գիշերն վասն անցուցանելոյ ժամանակ երկայնութեան գիշերի խաղացողքն մի շահեսցի և կորուսցի աւելի քանթէ երկու դահեկանս արծաթի, յաւելի քան զայս անարժան է և պարտաւոր տուգանաց։

## ԳԼՈՒԽ ՃՂԷ.

Ամենայն ոք որ բանասցէ բերանս իւր բանիւ նախատանաց ընդ դէմ ում որ իցէ թէ ընչի թէ պատուոյ՝ պարտէ ընդունիլ դատաստան, և եթէ բան բերանոյ իւրոյ ոչ կարասցէ արդարացուցանել վկայիւք և հաստատել առաջի ատենի՝ դատաստանի պատիժս գոցի։